ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2015 թվականի N 95-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐԸ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի ա/ ենթակետով, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2002 դեկտեմբերի 20-ի N 857 և 2013 թվականի օգոստոսի 12-ի թիվ 42 հրամանները, որոշում եմ.

1. Հաստատել Սյունիքի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և բժշկական սպասարկման որակի բարելավման միջոցառումների համալիր ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Ստեղծել նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և բժշկական սպասարկման որակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշտադիտարկման հանձնաժողով՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Հաստատել նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և բժշկական սպասարկման որակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշտադիտարկման հանձնաժողովի գործունեության աշխատակարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

4. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2015թ. հուլիսի 15
ք. Սիսիան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015 թվականի հուլիսի 15-ի
N 95 -Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ Սյունիքի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում պահանջվող սանատարահիգիենիկ նորմերի ապահովման և բշկական սպասարկման գործընթացի որակի բարելավման միջոցառումների

Ռազմավարական նպատակներ և առաջնահերթ ծրագրեր	Անհրաժեշտ միջոցառումների նկարագիրը	Կատարող և համակատարող	Պատասխանատու	Ժամկետներ
Ռազմավարական նպատակ 1 **Սանիտարահիգիենիկ անվտանգության ապահովման գործընթացի բարելավում**				
Ծրագիր 1 Նախակրթարաններում երեխաների սննդի կազմակերպմանը ներկայացվող պահանջների համապատասխանելիությունը ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի 42 հրամանի	1.Առողջ սննդի կազմակերպմանը և ճաշացուցակի կազմանը ներկայացվող պահանջները բավարարելու նպատակով իրականացնել դասընթացներ խոհանոցի պատասխանատուների , ՆՈՒՀ-ի ղեկավարության և ՆՈՒՀ-ում բժշկական ծառայություն իրականացնողների հետ և սահմանել նշված գործընթացի նկատմամբ շարունակական մշտադիտարկում	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի շահագրգիռ ստորաբաժանումներ, միջազգային կազմակերպություններ, ԱԱՊ իրականացնող տարածքային բուժկանխարգելիչ կազմակերպություն, համապատասխան փորձագետների ներգրավմամբ	Հանձնաժողով Հանձնաժողով	2015-2016 թթ. 2015թ.-2016թ

	2. Խոհարարական արտադրանքի պահանջների բավարարման համար իրականացնել դասընթացներ համապատասխան աշխատակիցների հետ և գործընթացի նկատմամբ սահմանել շարունակական մշտադիտարկում	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի շահագրգիռ ստորաբաժանումներ, միջազգային կազմակերպություններ, հանրային սննդի կազմակերպման բնագավառի փորձագետներ	Հանձնաժողով	2015-2016 թթ.
	3.ՆՈՒՀ-երի խոհանոցների արտադրական կառուցվածքներին ներկայացվող պահանջների բավարարում	Համայնքներ ,Միջազգային կամակերպությունների ներդրումներ	Հիմնադիր Հանձնաժողով	2015-2016թթ.
Ծրագիր 2 Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների և նախակրթարանների կահավորման համապատասխանելիության ապահովում՝ ՀՀ առողջապահության նախարարի2002 թվականի թիվ857 հրամանով նախատեսված պահանջներին	1.ՆՈՒՀ-ի շենքային պայմանների բարելավում	Համայնքներ, Միջազգային կամակերպությունների ներդրումներ	Հիմնադիր Հանձնաժողով	2015-2016 թթ.
	2. ՆՈՒՀ-ի կահավորման գործընթացի բարելավում	Համայնքներ, Միջազգային կամակերպությունների ներդրումներ	Հիմնադիր Հանձնաժողով	2015-2016 թթ.

Ռազմավարական նպատակ2 [redacted]				
Ծրագիր1 Բուժկանխարգելիչ գործընթացի բարելավում	1. ՆՈՒՀ-ի բուժկետերըի կահավորում և հագեցում (համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի թիվ 874 հրամանի պահանջների)	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն,Համայնքներ, Միջազգային կամակերպությունների ներդրումներ, ԱԱՊ իրականացնող տարածքային կազմակերպություն	Հանձնաժողով	2015-2016 թթ
	2 ՆՈՒՀ-ում աշխատող բուժքույրերի և պատասխանատու բժիշկների դասընթացների իրականացում՝ սկրինինգային ծրագրերի իրականացմն և իմունոկանխարգելման գործընթացի բարելավում ՆՈՒՀ-ում թեմաներով	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն,Համայնք ներ, Միջազգային կամակերպությունն ե ի ներդրումներ, ԱԱՊ իրականացնող տարածքային կազմակերպություն	Հանձնաժողով	2015-2016 թթ
Ծրագիր 2 ՆՈՒՀ-ում սանիտարաէպիդեմիոլոգիական	1.ՆՈՒՀ-ում աշխատող բուժանձնակազմի կրթում ՝ սանիտարաէպիդեմիոլոգիական ռեժիմի պահպանման թեմայով՝ հիվանդ	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և	Հանձնաժողով	2015-2016 թթ

ռեժիմի պահպանման գործընթացի բարելավում	երեխաների և աշխատակիցների վաղ [redacted] ունակություններ ձևավորելու համար, հիվանդ երեխաների մերժման գործընթացի բարելավում	սոցիալական ապահովության վարչություն, Միջազգային կամակերպությունների, ԱԱՊ իրականացնող տարածքային կազմակերպություն		
	2. ՆՈՒՀ-ում աշխատող բուժանձնակազմի ՀՀ կառավարության 2003 թվականի թիվ 347 որոշմամբ սահմանված անձնակազմի պարբերական բժշկական զննման իրականացում նախատեսված ծավալներով	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, համայնքներ	Հանձնաժողով	Մշտական

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015 թվականի հուլիսի 15-ի
N 95 - Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Վաչե Գրիգորյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/
2. Նունե Գևորգյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
3. Լենա Մալինցյան - ՀՀ ԱՆ առողջապահական տեսչության Սյունիքի մարզային կենտրոնի պետ(համաձայնությամբ)
4. Վահան Աբրահամյան - ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ <<Սյունիք>> մասնաճյուղի տնօրեն(համաձայնությամբ)
5. Սմբատ Օրբելյան - <<Կապանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն
6. Սաշիկ Խաչատրյան - <<Գորիսի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն
7. Սվետլաննա Իսախանյան - <<Սիսիանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն
8. Հովիկ Դավթյան - <<Քաջարանի բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն
9. Լուսինե Վարդանյան - <<Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն>> ՓԲԸ տնօրեն
10. Անիկ Գրիգորյան - <<Անգեղակոթի բժշկական ամբուլատորիա>>ՊՈԱԿ տնօրեն

11. Տյամո Սարգսյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ/քարտուղար/

12. Արևիկ Խաչատրյան - ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ <<Սյունիք>> մասնաճյուղի համաճարակաբան(համաձայնությամբ)

13. Արարատ Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզի գլխավոր մանկաբույժ

14. Արփինե Քարամյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ

15. Հայկ Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

16. Նելլի Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2015 թվականի հուլիսի 15-ի
N 95 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն աշխատակարգով սահմանվում են նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և բժշկական սպասարկման որակի բարելավմանն ուղղված միջոցառումների մշտադիտարկման հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) նիստերի վարման և որոշումների ընդունման կարգն ու պայմանները:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Հանձնաժողովի նպատակը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանիտարահիգիենիկ նորմերի ապահովումն է և բժշկական սպասարկման որակի բարելավումը, մատուցվող առողջապահական ծառայությունների որակի բարելավման գործընթացում բոլոր շահագրգիռ մարմինների համագործակցության, ներգրավվածության և արձագանքման գործընթացի համակարգումը , գերակա խնդիրների վերհանումը և համակարգումը:

3. Հանձնաժողովը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝

1) համակարգում է համաճարակային իրավիճակի լարվածության, բռնկումների ժամանակ արձագանքման միջոցառումները՝ շահագրգիռ մարմինների գործողությունների իրականացման միջոցով:

2) օժանդակում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում գործող պետական կառավարման և այլ մարմինների կողմից նախակրթարաններում իրականացվող սանիտարահիգիենիկ անվտանգության և բուժկանխարգելիչ աշխատանքներին,

3) կազմակերպում է նախակրթարաններում իրականացվող սանիտարահիգիենիկ անվտանգության ապահովման և բուժկանխարգելիչ հարցերին վերաբերող խորհրդաժողովներ, հանդիպումներ, քննարկումներ,

4) կազմակերպում է նախակրթարաններում իրականացվող սանիտարահիգիենիկ անվտանգության ապահովման և բուժկանխարգելիչ միջոցառումների վերանայման և լրամշակման աշխատանքները,

5) քննարկում է նախակրթարաններում իրականացվող սանիտարահիգիենիկ անվտանգության ապահովման և բուժկանխարգելման որոլտին առնչվող կառույցների կողմից ներկայացվող խնդիրները՝ ՀՀ առողջապահության նախարարության քննարկմանը համապատասխան առաջարկություն ներկայացնելու նպատակով:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են եռամսյակը առնվազն մեկ անգամ և ըստ անհրաժեշտության: Հանձնաժողովը տարեսկզբին հաստատում է աշխատանքային պլանը և իրականացնելիք մշտադիտարկման ժամանակացույցը: Հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման

արդյունքները ներկայացվում են հաջորդ նիստի քննարկմանը, որից հետո մշտադիտարկման հետ կապված առաջարկությունները կամ դիտողությունները ներկայացվում են հիմնադրին:

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը կարող է լինել 5, առավելագույնը՝ 21:

6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն արձանագրվում է: Հանձնաժողովի նիստերի արդյունքում կազմված արձանագրություններն ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

7. Հանձնաժողովի նիստերում, բացի հանձնաժողովի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու հանձնաժողովի նախագահի կողմից հրավիրված անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

9. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստին ներկա հանձնաժողովի անդամների ձայների կեսից ավելի ձայներով:

10. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

11. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

12. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը:

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը.

3) հանձնաժողովին է ներկայացնում հանձնաժողովի նիստերի օրակարգերի նախագծերը.

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը:

13. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

14. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և, անհրաժեշտության դեպքում, կատարելու դիտողություններ և առաջարկություններ:

2) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին.

3) իրենց իրավասության շրջանակներում կատարում են հանձնաժողովի որոշումները և նախագահի հանձնարարականները:

4) Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում վերջինս ծանոթանում է նիստի արձանագրությանը 5 օրյա ժամկետում:

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

14. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) արձանագրում է հանձնաժողովի նիստերը,

2) ապահովում է հանձնաժողովի նիստերի կազմակերպումը

3) ապահովում է հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող փաստաթղթերի և նյութերի պատրաստումը.

4) ապահովում է հանձնաժողովի նիստերի արձանագրության կազմումը, շրջանառում է այն և համակարգում է հանձնաժողովի անդամների դիտողությունների և առաջարկությունների քննարկման և արձանագրությունների լրամշակման գործընթացը.

5) ապահովում է հանձնաժողովի գործունեության մասին տեղեկատվության տարածումը.

15. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

16. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի որոշմամբ:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար Ռ.Ղազարյան